

«ԱՍԿԵ Գրուպ»  
Բաց բաժնետիրական ընկերություն

---

Պողպատաձուլական գործարանի վերակառուցման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

Կատարող՝ «Քոնսեկոարդ» ՍՊԸ  
Տնօրեն՝  
Վ.Թևոսյան



Չարենցավան - 2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	4
1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ.....	4
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը .....	4
1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	4
1.3.1. <i>Արտադրական գործընթացները, արտադրողականությունը և հումքը</i> .....	4
1.3.2. <i>Տեխնոլոգիական պրոցեսի կարճ նկարագիրը</i> .....	5
2. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ .....	8
2.1. Տեղադիրքը և երկրաբանական պայմանները .....	8
2.2 Կլիման .....	11
2.3. Օդային ավազան .....	11
2.4. Ջրային ռեսուրսներ .....	12
2.5. Հողային ռեսուրսներ .....	13
2.6. Բուսական աշխարհ.....	14
2.7. Սոցիալ-տնտեսական պայմանները .....	16
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	20
3.1. Ռիսկերի գնահատում .....	20
3.2. Արտանետումների աղբյուրները.....	20
3.3. Ջրօգտագործում և ջրահեռացում.....	21
3.4. Թափոններ.....	21
3.5. Սոցիալական ռիսկերը.....	22
3.6. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	22
3.6.1. <i>Մթնոլորտային օդ</i> .....	22
3.6.2. <i>Ջրային ռեսուրսներ</i> .....	22

3.6.3.	<i>Թափոնների կառավարում</i> .....	23
3.6.4.	<i>Կենսաբազմազանություն</i> .....	23
3.6.5.	<i>Աշխատանքի անվտանգություն</i> .....	23
3.6.6.	<i>Սոցիալական խնդիրներ</i> .....	23
3.7.	<i>Փոխհատուցում</i> .....	23

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված գործունեության ձեռնարկող է հանդիսանում «ԱՍԿԵ գրուպ» բաց բաժնետիրական ընկերությունը: Ընկերությունը մասնագիտացված է մետալուրգիական արտադրության բնագավառում:

Ընկերությունը գրանցված է՝ ՀՀ, Կոտայքի մարզ ք. Չարենցավան, Երևանյան 2 հասցեում:

Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ ք. Չարենցավան, Երևանյան 2:

## 1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է.

“Պողպատաձուլական գործարանի վերակառուցում”:

Նախատեսվող գործունեության նպատակն է կատարելագործել պողպատյա ամրանների, գնդերի և այլ արտադրատեսակների տեխնոլոգիական գործընթացները, բարձրացնել դրանց արդյունավետությունը և անվտանգությունը:

## 1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

### 1.3.1. Արտադրական գործընթացները, արտադրողականությունը և հումքը

Ներկայում Չարենցավանի գործարանում իրականացվում է սև մետաղների ջարդոնի հավաքում, պահեստավորում և վերամշակում, այդ թվում՝

- պողպատի նախապատրաստվածքների ձուլում
- ամրանների և աղացման գնդերի գլոցում:

Ներկայում գործարանում

#### ա. Վերագինման նպատակը

Ներկայում գործարանում պողպատի ջարդոնի հալումը իրականացվում է 3 հատ վառարաններում: Վառարանների տեխնիկական հնարավորությունները թույլ չեն տալիս իրականացնել մետաղի անխափան և արդյունավետ հալում, համապատասխանաբար՝ ապահովել արտադրատեսակների կայուն արտադրություն:

Ելնելով այս հանգամանքից, որոշում է կայացվել գործող երեք վառարանները փոխարինել մեկ հատ 40 տ/ժամ հզորությամբ ժամանակակից էլեկտրաաղեղային

վառարանով: Հին վառարանները տեղակայված են արտադրական շինության մեջ, որտեղ նաև կտեղադրվի նոր վառարանը:

Հին վառարանները նախատեսվում է օգտագործել որպես միջանկյալ տարողություններ մետաղի ջարդոնի բեռնման համար: Նոր վառարանի վթարային կամ այլ չնախատեսված կանգնեցման դեպքում, հին վառարանները կարող են կարճաժամկետ օգտագործվել ձուլման համար:

*բ. Արտադրանքի ցանկը և արտադրողականությունը*

- պողպատյա շինարարական ամրաններ  $\Phi 10 \div \Phi 32$  տրամաչափի՝ 110 000 տ/տարի,
- պողպատյա աղացման գնդեր  $\Phi 40 \div \Phi 125$  տրամաչափի՝ 6000 տ/տարի,
- պողպատյա նախապատրաստվածքներ (արտահանման համար)՝ 20 000 տ/տարի:

*բ. Հումքը և դրանց տարեկան քանակները*

Պողպատյա ձուլվածքների համար որպես հումք ծառայում է սև մետաղի ջարդոնը (պողպատի ջարդոն 90%, թուջի ջարդոն 10%) տարեկան 145 000տ, բացի դրանից օգտագործվում են ֆերոհամաձուլվածքներ պողպատի քիմիական բաղադրության համար, խարամագոյացնող նյութեր (կիր, պլավիկային շպատ, ածուխի փոշի և այլն)

**1.3.2. Տեխնոլոգիական պրոցեսի կարճ նկարագիրը**

Տեխնոլոգիական պրոցեսը կազմված է հետևյալ գործընթացներից.

- պողպատի հալում
- ձուլում
- գլոցում

ա) պողպատի հալումը կատարվում է էլեկտրոաղեղնային վառարաններում (ԷԱՎ): Մետաղի ջարդոնը զամբյուղով լցվում է ԷԱՎ-ի մեջ և 3 գրաֆիտային էլեկտրոդներով ստացված էլ. աղեղի օգնությամբ (աղեղի ջերմաստիճանը հասնում է 2500 °C) կատարվում է ջարդոնի հալումը: Հալման պրոցեսը ինտենսիվացնելու նպատակով հատուկ գազայրիչներով վառարան են ներփչվում գազ և թթվածին: Հալման ընթացքում վառարան են լցվում խարամագոյացման նյութեր (կիր և շպատ)՝ ոչ պիտանի նյութերը հալված պողպատից հեռացնելու համար:

Վերջում հալված մետաղը բաց է թողնվում հրակայուն երեսպատում ունեցող շերեփի մեջ և տեղափոխվում վառարանի ներքին մաս, որտեղ նույն սկզբունքով էլեկտրոդներով տաքացվում է մետաղը մինչև անհրաժեշտ ջերմաստիճան, միաժամանակ ավելացնելով ֆերոհամաձուլվածքներ, արդյունքում ստանալով անհրաժեշտ քիմիական բաղադրությունը:

բ) պողպատյա նախապատրաստվածքների ձուլումը կատարվում է անընդհատ ձուլման մեքենայի վրա: Հալված մետաղը շերտփից լցվում է բյուրեղարարի մեջ, որը իրենից ներկայացնում է 130X130մմ քառակուսի հնտենսիվ սառեցվող խողովակ, որտեղ մասնակի բյուրեղանալով անցնում է երկրորդական սառեցման գոտի և բաց ջրի շիթով սառեցվելով հասնում է ամբողջական բյուրեղացման, ապա գազակտրիչով կտրվում է անհրաժեշտ երկարության կտորների՝ հետագա գլոցման կամ իրացման համար:

գ) գլոցումը կատարվում է գլոցման հաստոցների վրա:

- ամրանների կամ կլոր բոլորակների գլոցումը իրականացվում է բազմաթիվ (10÷15 անցում) գրտնակների միջով: 130X130 չափի նախապատրաստվածքները աստիճանաբար սեղմվելով բարակում և երկարում են, դառնալով բոլորակ կամ ամրան,
- ստացված բոլորակները (Φ40, Φ60, Φ80, Φ100, Φ125) անցնելով հատուկ պարույրային գրտնակների միջով դառնում են համապատասխան տրամագծի գնդիկներ, որոնք անցնելով ջերմամշակման պրոցես ստանում են անհրաժեշտ ամրություն և կարծրություն՝ աղացներում օգտագործման համար:

*Օգտագործվող նյութերը և բնառեսուրսները*

- բնական գազ՝ հալման գործընթացի համար,
- օդ՝ հալման գործընթացի համար,
- ջուր՝ հովացման համակարգերի համար,
- խմելու որակի ջուր՝ անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար
- սև մետաղների ջարդոն,
- ֆերոհամաձուլվածք,
- կիր և շպատ:


Ջրի մատակարարումը իրականացվում է Վեոլիա Ջուր ընկերության Մաքրավանի և Ալափարսի ջրամատակարարման ցանցերից: Ջրի միջին ամսական ծախսը կազմում է 11000 – 12000 մ<sup>3</sup>, տարեկան ծախսը՝ 100000 – 140000 մ<sup>3</sup>, տատանումը պայմանավորված է հոսքագծի սպասարկման նպատակով աշխատանքների տևողության հետ:

Բնական գազի ծախսը կհաշվարկվի և կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

Օգտագործվող նյութերի և բնառեսուրսների ստույգ քանակները կներկայացվեն հիմնական փորձաքննության փուլում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ կազմում:

Ստորև բերված են «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ պողպատաձուլման տեխնոլոգիական սխեման:

**«ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ արտադրության տեխնոլոգիական սխեման**



<sup>1</sup>ԷԱՎ -40 – 40 տ-նոց Էլեկտրոն աղեղնային վառարան  
ՇՎ -40 - 40 տ-նոց շերեփ վառարան

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

### 2.1. Տեղադիրքը և երկրաբանական պայմանները

«ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ գործարանը գտնվում է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի Երևանյան 2 հասցեում՝ Չարենցավանի արդյունաբերական գոտում:

Գործարանը երեք կողմից շրջապատված է այլ արտադրական տարածքներով, պահեստներով և սպասարկման կազմակերպություններով:

Հյուսիս արևմտյան կողմից Ալափարս բնակավայրն է, որի մոտակա բնակելի տունը գտնվում է 520 մ հեռավորության վրա:

Չանենցավան քաղաքի բնակելի թաղամասերը գտնվում են հարավ-արևելյան կողմից, մոտակա շենքը՝ 870 մ հեռավորության վրա է:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

#### *Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները*

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները բարդ են: Սպառվող առավելագույն հորիզոնական արագացումները գտնվում են 0.25-0.45 g սահմաններում (8.25-9 և ավելի բալ), ընդ որում տարածքի գերակշռող մասի գրունտների արագացումները տատանվում են 0.3-0.35 g սահմաններում:

Ստորև բերված է «ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ պողպատաձուլական գործարանի տեղանքի իրադրային սխեման:







Նկար 1. Տեղանքի ռադրային սխեմա

## 2.2 Կլիման

Ըստ կլիմայի վերաբերյալ II-7.01-96 (IV II-05.2-99) շինարարական տվյալների գրքի՝ տարածքը պատկանում է երրորդ սառը կլիմայական գոտուն, որն ունի զով ամառ և ցուրտ ձմեռ: Կլիման Կոտայքի մարզում հիմնականում չոր մայրցամաքային է, երբ լեռնային տարածքները մեղմ ալպիական կլիմա ունեն: Հարթավայրում ամառը շոգ է, իսկ լեռներում՝ զով: Եղանակը տարվա առաջին կեսին աշնանը համեմատաբար ջերմ է, արևոտ առանց քամու, ինչը փոխվում է երկրորդ կեսին աշնան ներթափանցող հոսանքների պատճառով, և հաճախ նկատվում է ամպամած և անձրևոտ եղանակ: Ձմեռը ցուրտ է, առատ ձյունով, իսկ գարնան եղանակը փոփոխական է: Կոտայքի մարզում օդերևութաբանական կայանները գործում են Արզնիում, Գառնիում, Եղվարդում, Հանքավանում, Հրազդանում և Ֆանտան բնակավայրերում:

Չարենցավան քաղաքին ամենամոտ գտնվող օդերևութաբանական կայանը Հրազդան տարածքի օդերևութաբանական կայանն է, որը գտնվում է Հրազդանի արևելյան արվարձանում: Օդի միջին ջերմաստիճանը Կոտայքում CNRAII-7.01-2011 շինարարական կլիմայագիտությունից ներկայացվում են ստորև Աղյուսակ 5-2-ում: Տարեկան միջին ջերմաստիճանը 2011թ. 5.4 օC է: Օդի միջին ջերմաստիճանը գրանցվել է 2011թ. հուլիսին՝ 17.2օC (բացարձակ առավելագույնը գրանցվել է 35 օC), մինչդեռ ամենացածր միջին ջերմաստիճանը գրանցվել է հունվարին՝ -8.0 օC (բացարձակ նվազագույնը՝ -32 օC)։

Կոտայքի մարզի հարաբերական խոնավության տվյալները ներկայացվում են ստորև Աղյուսակ 5-3: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը արձանագրվել է 72%, ինչպես նաև բարձրագույն հարաբերական խոնավության տոկոսային առումով հունվարին (81%) և ամենացածր միջին հարաբերական խոնավության տոկոսային առումով օգոստոսի և սեպտեմբեր ամիսներին 2011 թ. (64%)։

Տարածաշրջանը բնութագրվում է զգալի առատ անձրևներով, 400-800մմ տարեկան տեղումների քանակով:

## 2.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիթորինգ) կողմից:

2019 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու

մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2019 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 34648 նմուշառում, իրականացվել 189008 դիտարկում:

Չարենցավան քաղաքում չկան ստացիոնար դիտակայաններ, այստեղ իրականացվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների չափումներ պասիվ նմուշառիչների միջոցով: Ստորև աղյուսակի տեսքով բերված են Էկոմոնիթորինգի 2019 թվականի տվյալները Չարենցավան քաղաքում այդ միացությունների միջին տարեկան կոնցենտրացիաների մասին:

Աղյուսակ 2.1. Չարենցավան քաղաքի օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը

<i>№</i>	<i>Որոշվող միացություն</i>	<i>Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ<sup>3</sup></i>	<i>ՄԹԿ միջին օրական, մգ/մ<sup>3</sup></i>
1	Ծծմբի երկօքսիդ	0.029	0.05
2	Ազոտի երկօքսիդ	0.013	0.04

## 2.4. Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Հրազդան գետի ջրհավաք ավազանում: Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմԱ է (առանց Սևանա լճի):Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետը, Գետառը: Սնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” /Հայէկոմոնիթորինգ/ ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ կառավարության, կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի



գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս), միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Համաձայն Հայէկոմոնիթորինգ-ի 2019թ. թվականի տարեկան տեղեկանքի Հրագրան գետի Քաղսի գյուղից ներքև և Արգել գյուղից ներքև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Գեղամավանի մոտ և Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Գեղամավանի մոտ հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածում՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Տարածքի ստորգետնյա ջրավազանը հարուստ է բարձրորակ քախցրահամ ջրերով, որոնք աղբյուր են հանդիսանում ջրամատակարարման համար: Տարածքի մակերեսային ջրերը ունեն թույլ սելավավտանգություն:

## 2.5. Հողային ռեսուրսներ

Կոտայքի սարավանդի բարձրադիր մասերում տարածված են շագանակագույն, ցածրադիր մասերում՝ բաց շագանակագույն և գորշ հողերը: Չարենցավանի տարածաշրջանում գերակշռում է *Շագանակագույն հողային տիպի բաց շագանակագույն, տեղ-տեղ կարբոնատային, ցեմենտացված* ենթատիպը: Բաց շագանակագույն հողերը զարգանում են շոգ և չոր կլիմայական պայմաններում, չոր տափաստանային գոտուն բնորոշ հացազգի տարախոտային *բուսական համակեցությունների* ազդեցությամբ, հիմնային հրաբխային և նստվածքային ապարների հողմնահարված նյութերի լիթոլոգիական հիմքի վրա: Բաց շագանակագույն հողերը հարուստ չեն հումուսով /2.0-3.5 %/ և աչքի են ընկնում լավ արտահայտված այլովիալ-կարբոնատային հորիզոնի առկայությամբ և հաճախ ունեն կարբոնատային ցեմենտացված հիմք, մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է: Այս հողերին բնորոշ է կատիոնների կլանման միջին ունակությունը, ջրային մզվածքի թույլ հիմնային ռեակցիան, կարբոնատների և քարի զգալի պարունակությունը: Հողերի գույնի մգությունը կապված է նրա մեջ հումուսի պարունակությամբ, որքան մուգ է գույնը՝ այնքան բարձր է հումուսի պարունակությունը: Չարենցավանի գերակշռում են քարքարոտ, ողողված և սակավազոր հողերը: Հողի բերրի շերտի հզորությունը մի քանի սանտիմետրից հասնում է մինչև մի քանի տասնյակ սանտիմետրի:

Անմիջապես նախատեսվող տարածքը ամբողջությամբ կառուցապատված և բետոնապատ կամ ասֆալտապատ է և հողային բաց շերտ չկա:

## 2.6. Բուսական աշխարհ

Տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ առկա տեղեկատվության ուսումնասիրությունը վկայում է, որ Կոտայքի մարզի բուսական աշխարհը շատ բազմազան է, ներառելով չոր անապատներ, անտառներ և ալպիական մարգագետիններ: Բուսական աշխարհի առումով հատկապես հետաքրքիր է Գեղարդի կիրճը, որտեղ առկա են բոլոր հետևյալ բուսատեսակները. *Linaria armeniaca*, *Acantholimon brqacteatum*, *Illium akana*, *Tulipa Julia*, *Corydalis augustifolis*, *Ornithogalum mountanum*, *O. gussonei*, *Campanula choziatorskyi*, *Bellevalia longystila*, *Muscari neglecta*, *Lotus goebelia*, *Astragalus strictifolis*, *Serratula serratuloides*, *Tomamthea aucheri*, *Malus oreienalis*, *Prunus divaricate*, *Sorbus graeca*, *S. persica*, *S. aucuparia*, *Cretaegus orientalis* և *C. lacimiata*: Կիսաչորային գոտին հատկորոշվում է օշինդրի և վաղանցուկ բուսածածկով, և այդտեղ առկա են հետևյալ բոլոր բուսատեսակները. *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrate* (L.), Schrad., *Capparis sinoza* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atropaxis sinosa* L., *Rhamnus pallasii* Fisch.et Mey., *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum* and *Aeluropus littoralis* (Gouan) Parl: Լանդշաֆտի մի մասը փոխակերպվել է ջերմություն սիրող մշակաբույսերի գյուղատնտեսական լանդշաֆտի ազդեցության տակ: Բուսապատվածության այդ տեսակը հաճախ կոչվում է <> և գտնվում է Իրանի անապատների ազդեցության գոտում: Կիսաչորային տարածքի ամենատարածված բուսատեսակը՝ օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*) կամ համանման տեսակները (օրինակ՝ *Artemisia araxina*): Գարնանը տարածքը ծածկված է վաղանցուկ բույսերով (*Ceratocephala falcate*, *Anisantha tectorum* և այլն): Կիսանապատային գոտու բուսատեսակների թվում հարկ է նշել կապար փշոտը (*Caparis spinosa*) և զուգատերև սովորականը (*Zygophyllum fabago*): Շրջանում հանդիպում են նաև բուսական աշխարհի վայրի աճող օգտակար հետևյալ տեսակները. անթառամ հայկական (*Helichrysum armenium*), մատիտեղ ջրապղպեղ (*Polygonum hydropiper*), կարմիր ալոճենի և ալոճենու այլ տեսակներ (*Crataegus astrosanguinea*), գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*), առյուծագի սովորական (*Leonorus cardiaca*) և մանդիկ մսագույն (*Polygonum cameum*):

Մինևույն ժամանակ պետք է նշել, որ պողպատածուլական գործարանը գտնվում է արդյունաբերական գոտում և այստեղ չկա բնական բուսածածկ:

## 2.7 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի կենսաբազմազանության վերաբերյալ առկա տեղեկատվության հիման վրա, բնական միջավայրի հավանական ծածկույթի բարձր որակի ուսումնասիրության արդյունքում, հայտնի է դարձել կենդանական աշխարհի հնարավոր

խմբավորումների առկայությունը: Յուրաքանչյուր ուղղահայաց բուսական գոտի, ներառյալ կիսաչորային գոտին, ունի իրեն հատուկ կենդանական աշխարհ: Բացի այդ, կենդանիների որոշ տեսակներ հանդիպում են համարյա բոլոր լանդշաֆտային գոտիներում՝ ելնելով դրանց էկոլոգիական ճկունությունից: Երկկենցաղները և սողունները ներկայացված են դողոշներով, ծառի գորտերով, քաղցրահամ ջրի կրիաներով, տիպիկ կրիաներով, գեկոններով, ազամաներով, մողեսներով, կույր օձերով, վիշապօձերով և լորտուններով: Առավել տարածված թռչունների տեսակներն են՝ հավանմանները, կռունկները, աղավնիները և ճնճղուկանմանները: Առավել տարածված կաթնասունների տեսակներն են՝ ոզնիները, սրնչակները, պայտաքիթ չղջիկները, մացառախոզերը, ճահճակուղբերը, սովորական սկյուռերը, ճագարները, մկները, կզաքիսները, շները, կատուները և խոզերը: Կիսաչոր գոտում գերիշխող կենդանիները հիմնականում պատկանում են Իրանական լեռնաշխարհի և մասամբ Կենտրոնական Ասիայի ողնաշարավորների: Այլ կաթնասունների թվում, հարկ է նշել հետևյալներին. սովորական դաշտամուկ (*Microtus arvalis*), կզաքիս (*Martes martes*), սովորական աղվես (*Vulpes vulpes*), երկարականջ ոզնի (*Erinaceus auritus*), շեկ իրիկնաչղջիկ (*Nyctalus noctula*), (*Vespertilio ognevi*), (*Plecotus auritus*), և այլն:

Ըստ Հայաստանի ազգայինատլասի տվյալների, Կոտայքի մարզում հանդիպող ողնաշարավորներից են նապաստակը (*Lepus sp.*) և գյուրգան (*Macrovipera lebetina*): Նապաստակը մարզում որսի կենդանի է հանդիսանում: Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում գրանցված է 308 տեսակ, ներառյալ 155 ողնաշարավոր և 153 անողնաշարավոր կենդանիներ: Դրանցից անողնաշարավոր կենդանիների 50 տեսակ և անողնաշարավոր կենդանիների 62 տեսակ համարվում են անհետացման վտանգի տակ գտնվող (CR) և անհապաղ պահպանման կարիք ունեցող:

Պողպատաձուլական գործարանը գտնվում է արդյունաբերական գոտում և այստեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր:

## **2.8. Բնության հատուկ պահպանվող տարածքներ /ԲՆՊՏ/**

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում, որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի 60-70%-ը, ներառյալ հազվագյուտ, անհետացման վտանգի տակ գտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Չարենցավանին ամենամոտը՝ Արզականի-Մեղրաձորի պետական արգելավայրն է, որի առավել մոտ գտնվող հատվածը տեղակայված է մոտավորապես 6 - 6.5 կմ հեռավորության վրա:

Մնացած ԲՀՊՏ-ները գտնվում են առավել քան 10 կմ հեռավորության վրա: Դրանք են.

- «Բանքսի սոճու» պետական արգելավայր՝ 16 – 17 կմ,
- Սևանի ազգային պարկ՝ մոտավորապես 30 կմ:

Քանի որ գործարանը գտնվում է Չարենցավան քաղաքի արտադրական գոտում, այստեղ չկան ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանիներ:

Այստեղ նաև չկան բնության հուշարձաններ և պատմամշակութային ժառանգության օբյեկտներ:

## **2.7. Սոցիալ-տնտեսական պայմանները<sup>2</sup>**

Ներկայացվող գործունեության ազդակիր համայնք է հանդիսանում Չարենցավան համայնքը:


Չարենցավանը հիմնադրվել է 1947 թվականի փետրվարի 23-ին, որպես ավան՝ Լուսավան անվանմամբ: 1961 թվականին ստացել է քաղաքի կարգավիճակ, իսկ 1967 թվականի սեպտեմբերի 23-ին Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակին վերանվանվել է Չարենցավան: 2017 թվականի նոյեմբերի 11-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ անելու մասին ՀՀ օրենքի համաձայն ձևավորվել է Չարենցավան խոշորացված համայնքը: Համայնքը ընդգրկում է թվով վեց բնակավայր՝ Չարենցավան, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս և Ֆանտան:

Չարենցավան քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում՝ մայրաքաղաք Երևանից 35կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոն Հրազդանից՝ 15կմ հարավ-արևմուտք, Հրազդան գետի ափին, ծովի մակարդակից 1600-1700 մետր բարձրության վրա: Այն մոտ է Երևան-Սևան ավտոմայրուղուն, քաղաքը հատում է նաև Երևան-Սևան երկաթուղին:

---

<sup>2</sup> Աղբյուր՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայք





Նկար 2. Տարածաշրջանի քարտեզը

Աղյուսակ 2.2. Համայնքի որոշ սոցալ տնտեսական ցուցանիշներ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ/ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	/6/ <ul style="list-style-type: none"> <li>• Չարենցավան</li> <li>• Ալափարս</li> <li>• Արզական</li> <li>• Բջնի</li> <li>• Կարենիս</li> <li>• Ֆանտան</li> </ul>
ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ (ՄԱՐԴ)	39570
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ, (ԿՄ)	35
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (հա)	24525.18
ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ ԾՈՎԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՑԹԻՑ (Մ)	1600-1700

Աղյուսակ 2.3. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

2019	
1. Մշտական բնակչության թվաքանակը	39570
2. Գրանցված ծնունդների քանակը	272
3. Մահացության դեպքերի քանակը	160
4. Ամուսնությունների քանակը	173
5. Ամուսնալուծությունների քանակը	39
6. Տնային տնտեսությունների թիվը	9695
7. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	1304
8. Կենսաթոշակառուների քանակը	5510
9. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	1656

**Աղյուսակ 2.4. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

<b>2019</b>	
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ2)	479594
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	202
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	2498

**Աղյուսակ 2.4. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

<b>2019</b>	
1. Հողեր, ընդամենը (հա)	24525.18
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	15001.41
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1407.98
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	3294
5. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	2853
6. Խոզերի գլխաքանակը	1129
7. Գյուղատնտեսական տեխնիկա	82, որից 6-ը համայնքային
7.1 տրակտորներ (քանակը)	66, որից 3-ը համայնքային
7.2 կոմբայններ (քանակը)	16, որից 3-ը համայնքային
8. Գյուղացիական տնտեսությունների թիվը	2443

### 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

#### 3.1. Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- Պողպատի թափոնների ընդունման, պահեստավորման և բեռնման աշխատանքների հետ,

- Պողպատի հալման, ձուլման և արտադրատեսակների պատրաստման հետ:

Գործունեությունը իրականացվում է գոյություն ունեցող շինություններում և օգտագործվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքները:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

#### 3.2. Արտանետումների աղբյուրները

Գործող արտադրության համար ընկերությունը 2013 թվականի հոկտեմբերի 17-ին ստացել էր թիվ 000106 արտանետման թույլտվությունը, ըստ որի արտանետվում են 7 անվանում վնասակար նյութեր, այդ թվում.

- անօրգանական փոշի՝ 8.5 տ/տարի,
- եռակցման աերոզոլ՝ 0.74 տ/տարի,
- մանգանի օքսիդներ՝ 0.024 տ/տարի,
- ածխածնի օքսիդ՝ 267.39 տ/տարի,
- ազոտի երկօքսիդ՝ 502.41 տ/տարի,
- մետաղական փոշի՝ 0.23 տ/տարի,
- հղկափոշի՝ 0.091 տ/տարի:

Ներկայում մեխանիկական արտադրամասը չի գործում և եռակցման աերոզոլի, մանգանի օքսիդների և հղկափոշու արտանետումները չկան:

Վերազինման արդյունքում առաջացող արտանետումների ցանկը և քանակները կհաշվարկվեն ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

### 3.3. Ջրօգտագործում և ջրահեռացում

Գործարանի ջրամատակարարումը իրականացվում է Վեոլիա ջուր ընկերության Մաքրավանի և Ալափարսի ցանցերից, գոյություն ունեցող միացումների միջոցով:

Ջուրը օգտագործվում է՝

- արտադրական նպատակներով՝ հոսքագծերի հովացման համար,
- կենցաղային նպատակով՝ անձնակազմի խմելու և տնտեսական նպատակներով:

Ջրօգտագործման միջին ամսական ծախսը կազմում է՝ 10000 – 12000 մ<sup>3</sup>:

Կոյուղաջրերը գործող կոյուղու ներքին ցանցի միջոցով հոսում են արտադրական գոտու Վեոլիա ջուր ընկերության կոյուղատարին:

### 3.4. Թափոններ

Գործարանում առաջանում են 7 տեսակի արտադրական թափոններ, որոնց համար մշակվել և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատվել են համապատասխան թափոնների անձնագրեր: Ստորև բերված է թափոնների մասին տեղեկատվությունը ըստ այդ անձնագրերի:

Աղյուսակ 3.1. Արտադրական թափոնների տվյալները

<i>Թափոնի անվանումը ըստ անձնագրի</i>	<i>Անձնագրի համարը</i>	<i>Թափոնի ծածկագիրը</i>	<i>Քանակը, տ/տարի</i>	
Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ	119-13	5410030302033	0.1	
Թթվային աղյուսի ջարդոն	121-13	3140140101995	5.0	
Իրենց սպառողական հատկությունները կորցրած արդյունաբերական յուղերի մնացորդներ	117-13	5410030502033	0.1	
Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան	116-13	3533010013011	0.01	
Եռակցման խարամ	118-13	3140480001994	0.01	
Էլեկտրավառարանների խարամ	115-13	3120180001004	4.8	
Աղյուսային փոշի	120-13	3140140211004	480.0	

Նշված թափոնների մի մասը արդեն իսկ չի առաջանում: Վերազինումից հետո առաջացող թափոնների ցանկը և բնութագրերը կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

### **3.5. Սոցիալական ռիսկերը**

Գործարանը գտնվում է արտադրական գոտում, բնակելի թաղամասերից զգալի հեռավորության վրա և շահագործումը չի ունենա շոշափելի ազդեցություն բնակչության առողջության կամ կենսակերպի վրա:

### **3.6. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

Սույն ենթաբաժնում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները, ըստ ազդեցության ուղղությունների:

#### **3.6.1. Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- արտադրական մասնաշենքը ապահովված է օդափախության համակարգով,
- հալման վառարանը կահավորված է օդաքարշ համակարգով,
- ձուլարանները կահավորված է օդաքարշ համակարգով,
- բոլոր արտանետումները հավաքվում են մեկ խողովակի մեջ և մաքրվում 4 հատ փոշեկլանիչ հանգույցներում, որոնք կահավորված են թևքային գոխիչներով, յուրաքանչյուրը՝ 6000 մ<sup>2</sup> մակերեսով պարկերով:

Նախատեսվում է իրականացնել մաքրման համակարգի նորոգում:

#### **3.6.2. Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- հովացման գործընթացը իրականացվելու է շրջանառու համակարգի միջոցով, հովացման 4 հատ աշտարակներում
- արտադրական արտահոսքը հավաքվելու է 3 հատ ավազաններում, որտեղ իրականացվելու է կախված մասնիկների նստեցում և յուղային մասի անջատում
- մաքրվելով տեղային մաքրման կայանում շրջանառու ջրերը վերադարձվելու են հովացման համակարգ:

Վթարային դեպքերի և հակահրդեհային իրավիճակների համար նախատեսված են ջրի պահեստային տարողություններ:

### ***3.6.3. Թափոնների կառավարում***

Բոլոր տեսակի թափոններն ունեն հաստատված անձնագրեր և դրանց հավաքումը, ժամանակավոր պահեստավորումը և հետագա օգտագործումը կամ այլ լիցենզավորված կազմակերպություններին տրամադրումը կատարվում է ըստ այդ անձնագրերի պահանջների:

Վերազինման արդյունքում առաջացող թափոնների ցանկը կկրճատվի, մնացած թափոնների քանակները չեն փոխվի:

### ***3.6.4. Կենսաբազմազանություն***

Տարածքը գտնվում է արտադրական գոտում, որտեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր և բնական բուսականություն:

### ***3.6.5. Աշխատանքի անվտանգություն***

Գործարանում առկա են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արձագանքման բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային պայմանները բազմիցս ստուգվել են ԱԻՆ ստորաբաժանումների և այլ տեսչությունների կողմից:

### ***3.6.6. Սոցիալական խնդիրներ***

Ինչպես վերը նշվել է գործարանի շահագործումը չի առաջացնի խնդիրներ մոտակա բնակելի թաղամասերի համար:

Միևնույն ժամանակ գործարանի շահագործումը թույլ է տալիս մոտավորապես 500 աշխատողների լուծել իրենց ընտանիքների սոցիալական խնդիրները:

## **3.7. Փոխհատուցում**

Նախատեսվող բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Բնապահպանական միջոցառումների մանրամասն նկարագրությունը, կատարողների ցանկը և ծախսային ցուցանիշները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության կազմում:

Աղյուսակ 3.2. Բնապահպանական և սոցիալական միոցառումների համառոտ ծրագիր

№	Արտադրական գործընթացը	Բնապահպանական կամ սոցիալական միջոցառում	Մոնիթորինգի եղանակ
1	Թափոնների ընդունում	Սև մետաղի ջարդոնը պահեստավորել առանձին հարթակներում	Արտաքին զննում
2	Մետաղի ջարդոնի նախապատրաստում	Մետաղի ջարդոնի տեղափոխումը և բեռնումը իրականացնել մեխանիկական եղանակով՝ նվազագույնի հասնելով ձեռքի աշխատանքը	Արտաքին զննում
2	Հալում	ա/ Վառարանի կառավարումը իրականացնել ավտոմատ չափիչ հսկիչ սարքերով  բ/ Ջերմաստիճանի ավտոմատ կարգավորում	Հսկիչ չափիչ սարքերի գրանցումների վերլուծություն
3	Հալվածքի ձուլում	Բոլոր հոսքագծերը պետք է ունենան օդաքարշ ծածկեր /զոնտ/	Արտաքին զննում
4	Հալվածքների և ձուլվածքի հովացում	Հովացումը իրականացնել շրջանառու համակարգով, բացառելու համար ջրի աղտոտումը նյութերի հետ չփման արդյունքում	Արտաքին զննում
5	Հալման և ձուլման գործընթացներ	Վերանորոգել գազաօդային հոսքի /արտանետումների/ մաքրման համակարգը  Հետևել մարման համակարգի տեխնոլոգիական ցուցանիշների	Վերանորոգման աշխատանքների հանձնման-ընդունման փաստաթղթեր  Տարածքում և մոտակա բնակելի թաղամասում օդի աղտոտվածության պարբերական <sup>3</sup> չափում,

<sup>3</sup> Չափումների մեթոդիկան և պարբերականությունը կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում



№	Արտադրական գործընթացը	Բնապահպանական կամ սոցիալական միջոցառում	Մոնիթորինգի եղանակ
		համապատասխանությանը ռեգլամենտային ցուցանիշներին	այդ թվում՝ NO <sub>2</sub> , CO, ՊՄ /փոշի/
6	Աշխատանքի անվտանգություն	<p>ա/ արդիականացնել և ԱԲՆ մարմինների հետ համաձայնեցնել «Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանը</p> <p>բ/ Սպասարկող անձնակազմի համար կազմակերպել բանեցրած անվադողերի պիրոլիզի կայանքի անվտանգ շահագործմանն ուղղված ուսուցողական դասընթացներ:</p> <p>գ/ Ապահովել վառարանները սպասարկող անձնակազմին անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներով:</p> <p>դ/Կահավորել հալման և ձուլման տեղամասերը անվտանգության նշաններով և ցուցադրական վահանակներով:</p> <p>ե/Ապահովել արտադրամասը՝ առաջնային հրդեհաշիջման միջոցներով և այլ հակահրդեհային հանդերձանքով:</p> <p>զ/ կազմակերպել գործարանի տարածքում անձնակազմի առաջին օգնության և բուժսպասարկման կետ</p>	<p>«Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանի առկայություն</p> <p>Դասընթացների մատյանների առկայություն</p> <p>Միջոցների առկայություն</p> <p>Նշանների առկայություն</p> <p>Միջոցների առկայություն</p> <p>Բուժկետի առկայություն</p>
	Սոցիալական պարտավորություններ	ա/ հնարավորությունների սահմաններում Չարենցավանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված մասնակցել	Արձանագրություն

<i>№</i>	<i>Արտադրական գործընթացը</i>	<i>Բնապահպանական կամ սոցիալական միջոցառում</i>	<i>Մոնիթորինգի եղանակ</i>
		<p>համայնքի սոցիալական ծրագրերին</p> <p>բ/ Ծանուցել մոտակա բնակելի թաղամասերի բնակիչներին բոլոր վթարային իրավիճակների մասին լրատվամիջոցների և համայնքապետարանի միջոցով</p>	<p>Լրատվամիջոցների և ծանուցման փաստաթղթերի առկայություն</p>

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՐԱԴԴԵՏՈՒԹՅՈՒՆ



## Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
(ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԳՐԱՆՅՄԱՆ

ՏԵՂԵԿԱՆԷՐ

Ձև N 2

Հայաստանի Հանրապետության  
կառավարության անդամներ  
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի

Գաղտնիացված


Տրամադրվում է Գաղտնիացված Գաղտնիացված, ու - Կ. 93732 Գաղտնիացված  
Անունը, Հայրանունը, Ազգանուն (անվանումը)

Կ/Ա - ում սեփականության իրավունքով զբաղեցրած «Նուկ Զրույ»  
Բ.Բ.Ը.Ը. Զրգուհարյանի կողմից կադաստրային հարկային հաշիվի N 14.04.06/0 զրու-  
հարյան / Գաղտնիացված արժեքի համար կադաստրային 2500.000 ջրած է, որից  
պարտ է հաշվարկել Զրգուհարյանի կողմից կադաստրային հարկային հաշիվի  
հարկը: Գաղտնիացված արժեքի համար կադաստրային հարկային հաշիվի  
և Զրուհարյանի համար

Տրամադրման ամսաթիվը

« 14 » « 04 » 2006 թ.

ժամը, լույսն՝ 11:00



Գաղտնիացված  
(Անուն, Ազգանուն)

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման  
վկայականը հանդիսանում է միակ փաստաթուղթը, որը հաստատում է անշարժ գույքի  
նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքը եւ սեփականատիրոջն  
իրավունք է տալիս կատարել անշարժ գույքի հետ կապված Հայաստանի  
հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործարքներ:

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է \_\_\_\_\_ ՍԵՓԻԱԿԱՆՈՒՅՄԻ  
սեփականության (օգտագործման) ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
"ԱՍԿԵ ԳՐՈՒՊ" ԲԲԸ  
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Կոտայքի մարզ ք. Չարենցավան Երևանյան փ. 2  
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)  
արտադրական օբյեկտի \_\_\_\_\_ ՆԿԱՏՄԱՐԲ

15.11.02թ. "Թուրքմուլ" ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի  
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)  
արձանագրությունից քաղվածքի; N746655 սեփականության իրավունքի փխսւս ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
07.007.3.1 ՄԱՏՅԱՆԻ \_\_\_\_\_ 063 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՈՐԻՑ ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ  
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄ ՕՐԻՆԱԿԸ ՊԱՅՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ \_\_\_\_\_ Ե.Գառոյան



(ստորագրություն)

Կ.Տ.


21 նոյեմբերի 199 թ.  
2005թ.

0154596



# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:5000  
(մասշտաբ)



ՕՐԵՆՈՒՅՈՒՄ	ՔԻՄՈՒՐՅԱԼՆԵՐ
1	ԱՇԽԱՏՈՒՄԻ
2	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ԿՐԸ
3	ՋՈՒՆԵՐԻ ԱՐՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
4	ԷՒ ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
5	ԴՈՒՐՆԵԿԱՅԻՆ ՈՒՅ
6	ՄՈՒԳԵՆՆԵՐԱԿԱՆ ԱՐՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
7	ԷՒ ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
8	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
9	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
10	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
11	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
12	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
13	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
14	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
15	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
16	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
17	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
18	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ

ԶԱՅԿԱՆ	ԶԱՅԿԱՆ	ԱՄՅՈՒՆՆԱԿԱՆ
1-2	89,0	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
2-3	94,3	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
3-4	285,0	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ
4-1	455,0	ՎԵՐՄԵՆՆԵՐԱԿԱՆ ՈՒՅ

Կատարող Ս. Լալայան  
(ստորագրություն)




# ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

1:200  
(մասշտաբ)

Լ.Բ. ՉԱԿԿ.  
Ք=10.0  
Մ=3.00  
Մ=3.3

ԿԱՓՈՏՆԱԿԱՆ ՄԱՆՆԱԶԵԹ



Կատարող Լ. Բ. ՉԱԿԿ  
(նյութակազմակերպ)



**ՀՈԴԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 07-007-009-001  
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Արտադրական  
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Արտադրական  
 ՀՈԴԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) 13.640  
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ Վարձակառության *Անփականություն*

**ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 07-007-009-001-001  
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Հասարակական  
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ վարչատնտեսական մասնաշենք  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ(ՔՄ) 7397.1  
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ սեփականության

**ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Գ/Գ	ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քմ)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ
1	009-001-002	Չուլման արտադրամաս	59136.0 ✓	սեփականության
2	009-001-003;006;017	Էլ. ենթակայան N3;N2;N1	900.9 ✓	սեփականության
3	009-001-004;009	Պոմպակայան N2;N1	620.1 ✓	սեփականության
4	009-001-005	Սողելային արտադրամաս	3609.7 ✓	սեփականության
5	009-001-007;012;013;014	Կիսակառույց; N3; N2; N1	3041.8	սեփականության
6	009-001-008; 015	Ոեգերվուար N2; N1	189.6 ✓	սեփականության
7	009-001-010	Ջրահովարան	451.8 ✓	սեփականության

Լրացուցիչ նշումներ; փոփոխություններ  
 8 009-001-011; 018 Պահակատուն N2; N1 25.1 ✓ սեփականության  
 9 009-001-016 Գազամաքրման կայան 6875.6 ✓ սեփականության

Շենք և շինության ընդհանուր մակերեսը--82247.7քմ

Ներդիր՝ 28/քսանութ/ քերթ

*Խողամասի նկարմամբ սեփականության իրավունք փոխանցված է ՀՊ 04.10.2005թ N 199-Ն օրենքի 23 հոդվածի պահանջների համաձայն, պայմանով գրով հերազա օբյեկտն գործարարների ճակոչ էրան վանկների պեղական գրանցումը կկատարվի վճարման պահել գործող, Խողամասի կադաստրային արժևի, վճարման անորոշագիրը ներկայացվելու դեպքում: 15.01.2006թ*

Կատարողներ *Լ. Բաբյան* Հարությունյան  
 (ստորագրություններ)  
*Լ. Բաբյան* Ա. Բալբաբյան





